ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

«ԱՂՎԱՆՔ» ՏԵՂԱՆՎԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՍՎԱՋՅԱՆ Հ. Ս.

«Լրաբեր հասարակական գիտությունների» քառամյա հանդեսի 3-րդ համարում պատմական գիտությունների դոկտոր Է. Լ. Դանիելյանը հրապարակել է մի հոդված՝ «Հայոց պատմության հիմնահարցերի խեղաթյուրման վտանգը» [1] վախվորած զգուշավորություն ներշնչող վերնագրով, որտեղ հոդվածագիրն իր անհամաձայնությունն է հայտնում հայագիտական որոշ հարցերի վերլուծությունների առնչությամբ և, հայրենի գիտության ապագայի հանդեպ վտանգ տեսնելով դրանցում ու քննադատական խոսքեր ուղղելով վերջիններիս հեղինակների հասցեին, փորձում է պարզաբանումներ մտցնել իր պատկերացումների համաձայն:

Հոդվածում Է. Դանիելյանի քննադատական խոսքերի տեղատարափի տակ են ընկել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բ. Հարությունյանը, պատմական գիտությունների թեկնածու Ս. Հմայակյանը, Ռ. Հյուսենը և տողերիս հեղինակը: Նշվածներից առաջին երկուսը անհայտ անձեր չեն հայագիտության մեջ: Նրանք մեծ վաստակ ունեն հայ պատմագիտական մտքի զարգացման գործում և իրենց աշխատություններում հանդես են գալիս որպես հայրենի գիտության անաղարտությանն ու անաչառությանը ոչ պակաս նախանձախնդիր հետազոտողներ, քան ինքը՝ հոդվածի հեղինակը, որ այստեղ ներկայանում է հայագիտական հայեցակարգի ջատագովի դերում: Մեր խնդիրը, սակայն, ներկա հոդվածում նրանց դրույթները պաշտպանելը չէ: Դա, անշուշտ, իրենց՝ վերոհիշյալ հեղինակների գործն է: Ստորև կանդրադառնանք սոսկ անմիջականորեն մեզ առնչվող հարցերին, որ բարձրացրել է Է. Դանիելյանը: Վերջինս մեզ «մեղադրում է» նրանում, որ մենք մեր աշխատությանը կից քարտեզներից մեկում («Աղվանից մարզպանության տրոհումը և «Աղվանք» անվան նոր հասկացության առաջացումը»)[2] «Աղվանքը» գրանցել ենք «Արցախի և Ուտիքի տարածքում, իսկ Կուրի ձախափնյակում այն ընդհանրապես» չենք նշել,չի ընդունում Կուրի ձախափնյակում հիշյալ անվան հիշատակության՝ մեր ցույց տված ժամանակագրական սահմանը՝ VIII դարը, և որ գրքին կից երեք քարտեզներում բացակայում է «Հայաստան» երկրանունը, մինչդեռ դրոշմված են հարևան երկրների՝ Վիրքի ու Աղվանքի անունները[3], այս

[1] Դանիելյան Է. Լ., Հայոց պատմության հիմնահարցերի խեղաթյուրման վտանգը [Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Լրաբեր), Ե., 2007, N 3, էջ 201- 223]:
[2] Սվազյան Հ. Ս., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից - VIII դարը ներառյալ), Ե., 2006, էջ 29:
[3] Դանիելյան Է. Լ., նշվ. հոդվ., էջ 219-220:

ամենը ուղեկցելով իր ընկալումներին համապատասխան մեկնաբանություններով ու ոչ այնքան տեղին վկայակոչումներով:

Առաջին տպավորությունը, որ ստացանք, ընթերցելով Է. Դանիելյանի հոդվածը, այն էր, որ հեղինակը ծանոթ է եղել մեր գրքի ընդամենը այն հատվածին, որ որպես մեջբերում ներկայացրել է ընթերցողին[4]: Հակառակ պարագայում նա զուցեև անկողմնակալ կեցվածք դրսևորեր և, Արցախի ու Ուտիքի տարածքում տեսնելով «Աղվանք» աշխարհագրական անվանումը և ճիշտ գնահատելով պատմական իրադարձությունների ընթացքը, կեղծ տագնապի ազդանշան չհնչեցներ: Համենայն դեպս, գոնե մեզ այդպես է թվում, որովհետև գրքում բերված են սկզբնաղբյուրային այն բոլոր վկայություններն ու դրանց առնչությամբ ուսումնասիրողների հայտնած կարծիքները, որոնց մանրակրկիտ քննությունն էլ մեզ բերել է նման եզրակացության և հիմք դարձել քարտեզագրելու համար՝ իբրևև պատմական տարբեր ժամանակահատվածներում «Աղվանք» անվան իմաստային փոփոխությամբ պայմանավորված իրողության արտացոլում: Բայց քանի որ անկախ ամեն ինչից առկա է «մեղադրանքը», ուստի նպատակահարմար ենք գտնում անհրաժեշտ լրացումներով մեկ անգամ ևս հիմնավորել մեր տեսակետը:

Մովսես Խորենացին, խոսելով Հայոց հյուսիսարևելյան կողմերում («զարևելից հիւսիսոյ կողմանն») Կուր գետի երկայնքով («առ մեծ գետովն, որ…անուանի Կուր») հայկազուն Սիսակից ժառանգություն ստացած ավանդական Առան նախնու տիրույթի մասին[5], այն անվանում է «Աղուանք» և նրա համար, ի տառմերություն անտիկ հեղինակների ճանաչած համանուն երկրի[6], որն ընդունված է կոչել «բուն Աղուանք»[7], մատնանշում բոլորովին այլ աշխարհագրական սահմաններ. «ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ»[8]: Ուրեմն, Խորենացու «Աղուանքի» սահմաններն հյուսիսում անցել են Կուր գետով, հարավում՝ Արաքս գետով, իսկ հյուսիս-արևմուտքում՝ Հնարակերտ ամրոցով:

Հետևելով Մովսես Խորենացուն՝ հիշյալ Աղվանքի համար նույն սահմաններն է ցույց տալիս և Մովսես Կաղանկատվացին[9]: Պատմագիտու-

---

[4] Նույն տեղում, էջ 219:

[5] Մովսես Խորենացու այս հաղորդման մանրամասն վերլուծությունը տե՛ս Սվազյան Հ., Խորենացիական ավանդազրույցի Սիսակ-Առանյան ճյուղը և նրա պատմական ատաղձը (տե՛ս Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր), Ե., 2007, էջ 5-19:

[6] Անտիկ հեղինակների հաղորդումների քննությունը ցույց է տալիս, որ նրանց հայտնի «Աղվանքի սահմաններն հյուսիսում կազմել են Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի Կերաունյան ճյուղը և նրանից սկիզբ առնող Սոանա (Սուանաս-Սումգայիթ) գետը,արևելքում՝ Կասպից ծովը, արևմուտքում՝ Ալազան գետը, հարավում՝ Կուրը (մանրամասնությունները տե՛ս Սվազյան Հ. Ս., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 54-71):

[7] Տերմինն առաջին անգամ օգտագործել է Անանիա Շիրակացին, որ սույն երկրի աշխարհագրական տեղը Կովկասում ցույց տալու համար հատուկ շեշտում է. «բայց մէք ասասցուք զբուն աշխարհն Աղուանից (ընդգծումը՝ Ս. Հ.), որ ընդ մէջս է մեծի գետոյն Կուրայ և Կովկաս լերինն» (Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ, յաւելուածովք նախնեաց,Վենետիկ, 1881, էջ 28-29):

[8] Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց, Ե., 1991, էջ 113:

[9] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քնն. բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 8:

թյանը վաղուց է հայտնի, որ նշված սահմաններում պարփակված երկրամասն ընդգրկում էր հայկական եզերական նահանգներ Ուտիքի ու Արցախի միացյալ տարածքը: Հետևաբար, առանձին խորաթափանցություն պետք չէ ունենալ հասկանալու համար, որ Խորենացին (նմանապես և Կաղանկատվացին) «Աղվանք» է անվանում Արցախի և Ուտիքի վարչա-քաղաքական ամբողջական տարածքը [10] : Եվ Խորենացին միակը չէ: Նույն տարածքը «Աղվանք» են կոչել հայ միջնադարյան այլ պատմիչներ ևս, իսկ XI-XII դդ. ժամանակագիր Մատթեոս Ուռհայեցին տվել է այս ամենի սպառիչ բացատրությունը. «Աշխարհ Աղուանից, որ ասի՝ խորին աշխարհ Հայոց»[11]:

Ելնելով նման փաստական տվյալներից՝ դեռևս Միքայել Չամչյանցը այն կոչել է «Աղուանք Հայոց» և առավել տարբերակման համար բուն Աղվանքն անվանել «Աղուանք Շիրունայ կամ Շիրուան»[12]: Մեր մյուս երախտավորներից Ստ. Կանայանցն էլ, որ հանիրավի անտեսվել է ուսումնասիրողների կողմից, սեփական դիտարկումների շնորհիվ նույն տարածաշրջանը կոչում է «Աղուանից Հայք»: «Այսպիսով,- գրում է նա,- ուրեմըն կա բուն Աղուանք Կովկասից մինչև Կուր և, ասենք, Աղուանից Հայք՝ Կուրի և Երասխի միջև» [13] , ապա շարունակում. «և կարելի է համարձակ պնդել, որ մեր բոլոր հեղինակները Աղուանք ասելով վերջին մասն են հասկանում, մանավանդ Ե դարուց սկսեալ»[14]: Այնուհետև ուսումնասիրողները, գրեթե առանց բացառության, լայնորեն գործածել են հատկապես «Հայոց Աղվանք» կապակցությունը՝ իբրև Ուտիք-Արցախյան աշխարհին տրվող «Հայոց Արևելից կողմանց», «Հայոց հյուսիսարևելից կողմանց», «Խորին աշխարհ Հայոց» հասկացություններին համարժեք երկրանուն, և ոչ ոք դրանում որևէ արտառոց բան չի տեսել: «Աղվանքը», ինչպես և մյուս նշվածները, դարձել էր երկրամասի անվանումներից մեկը, և ինչ զարմանք, որ քարտեզում՝ Ուտիքի ու Արցախի կողքին,գրանցվել է և այդ մեկը, երբ դա էր պատմական իրողությունը իր ժամանակի մեջ:

Այսպիսով, խորությամբ ուսումնասիրած չլինելով հարցը, Է. Դանիելյանը խեղաթյուրած է համարում պատմական իրադարձությունների օբյեկտիվ ընթացքով պայմանավորված եղելությունը, որը, իր հերթին, վերապրել էր «Աղվանք» տերմինի իմաստային փոխակերպումներով ուղեկցվող անցումային շրջաններ: Ի դեպ, այդ մասին մենք խոսել ենք

---

[10] Չնայած պատմիչների այսպիսի ուղղակի և աներկմիտ ցուցումներին, Է. Դանիելյանը, այնուամենայնիվ, «հնարք է գտնում» Խորենացու հիշյալ հաղորդման մեջ ի դեմս Սիսակից սերված գնդի, այսինքն՝ Առանի, տեսնել բուն Աղվանքում վերջինիս տիրապետության հաստատմանը վերաբերող տեղեկություն: Մանրամասները տե՛ս Սվազյան Հ., Է. Դանիելյան, Գանձասարի պատմություն [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2007, N 3, էջ 236-245]:

[11] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 230:

[12] Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, յօրինեալ ի հայր Միքայէլ վարդապետէ Չամչեանց, հ. Գ, Ե., 1984, էջ (նոր էջակալումով) 131:

[13] Կանայեանց Ստ., Անհայտ գավառները Հին Հայաստանի, Վաղարշապատ, 1914,էջ 146-147:

[14] Նույն տեղում, էջ 147:

նաև նախկինում[15], բայց, ինչպես երևում է քննարկվող հոդվածից, դա անհասանելի է մնացել, ուստի և նույնը համառոտակի, սակայն անհրաժեշտ լրացումներով կներկայացնենք ստորև:

Սկզբնապես «Աղվանք» տեղանունն արտահայտում էր Կուր գետի և Կովկասյան լեռնային զանգվածի Կերաունյան ճյուղի միջև ընկած տարածքը և հանդես էր գալիս որպես այդ տարածաշրջանում պարփակված պետական կազմավորման անվանում: Այն իր սույն բովանդակությունը պահպանում է Աղվանից պետականության գոյության ամբողջ ժամանակաշրջանում՝ կազմավորման սկզբից մինչև վերացումը կամ, ժամանակագրական առումով՝ մ.թ.ա. I դ. - մ.թ. V դ. կեսերը: Նշված ժամանակահատվածը կազմում էր Աղվանքի քաղաքական պատմության մի առանձին շրջան՝ իր ուրույն աշխարհագրական սահմաններով և, համապատասխանաբար, «Բուն Աղվանք» անունով, որի ուսումնասիրությանը մեր աշխատության մեջ հատկացված է հատուկ բաժին[16]: Նույն սկզբունքն ընկած է նաև մեր գծագրած քարտեզներից առաջինում, որում արտացոլված են տերմինի՝ նախնական իմաստով գործածության ժամանակաշրջանը և ոլորտը[17]:

461 թ. պարսից Պերոզ արքան (459-484), Աղվանքի թագավոր Վաչե Բ-ին հեռացնելով գահից, երկրում վերացնում է թագավորությունը և հաստատում կառավարման մարզպանական ռեժիմ: Դրան զուգընթաց՝ Սասանյան Իրանը Մեծ Հայքից անջատում է նրան հարակից հայկական նահանգներ Ուտիքն ու Արցախը՝ իրենց գավառներով, և միացնում կազմավորվող մարզպանությանը [18] : Սասանյանների այդ քայլը հետապնդում էր և քաղաքական, և տնտեսական նպատակներ: Դրանով նրանք թուլացնում էին Հայաստանը և բուն Աղվանքից ու նրան բռնակցված հայկական նահանգներից ստեղծում մեկ միասնական վարչական ու հարկային միավոր՝ իրենց համար դյուրին կառավարման համակարգով:

Աղվանից մարզպանությունն ընդգրկում էր մի ընդարձակ տարածություն՝ Կովկասյան լեռներից մինչև Արաքս գետը՝ հայկական նահանգների բռնակցման շնորհիվ:

Վարչաքաղաքական նման զարգացումները մերում են նաև մեզ հետաքրքրող տերմինի իմաստային փոփոխություն: «Աղվանքը» դառնում է ողջ մարզպանության անվանում և սկսում արտահայտել վերջինիս, այդ թվում և՝ Ուտիքի ու Արցախի՝ իբրև նրա բաղկացուցիչ մարզերի տարածքը: Այսպես. V դ. կեսերից պատմության մեջ առաջին անգամ հայոց հին նահանգներին տրվող «Ուտիք» և «Արցախ» պատմական անունների

---

[15] Սվազյան Հ. Ս., Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը (ՊԲՀ,1979, N 4, էջ 210-218), նույնի՝ Աղվանքը և Միհրանյան տոհմը (Լրաթեր, 1980, N 9, էջ 91-101), նույնի՝ Աղվանից աշխարհի պատմություն, էջ 199-207, 216-221):

[16] Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 91-160:

[17] Տե՛ս Աղվանքը մ.թ.ա. I – մ.թ. V դարի առաջին կեսում (մինչմարզպանական շրջան) վերնագրով քարտեզը (նույն տեղում, էջ 292):

[18] Է. Դանիելյանը գտնում է, որ Արցախն ընդհանրապես, իսկ Ուտիքն էլ մի հատվածով երբեք էլ չեն կազմել Աղվանից մարզպանության մասեր (տե՛ս Դանիելյան Է., Գանձասարի պատմություն,Ե., 2005, էջ 14, ծանոթ. 27, էջ 37): Նրա այս տեսակետի քննությունը տե՛ս Սվազյան Հ. Ս., Է. Դանիելյան, Գանձասարի պատմություն (ՊԲՀ, 2007, N 3, էջ 239-241):

կողքին ի հայտ է գալիս «Աղվանք» անվանումը, որը, սակայն, նրանց համար մնում է սոսկ որպես աշխարհագրական հասկացողություն[19]: Բայց ինչպիսին էլ այն լիներ Ուտիքի ու Արցախի համար, նշված ժամանակից, տարածքային ընդարձակումների հետ կապված, սկիզբ է առնում նոր բովանդակությամբ «Աղվանք» տեղանվան գործածության հաջորդ փուլը, որն ընդգրկում էր մարզպանության կազմավորումից մինչև նրա տրոհումն ընկած ժամանակաշրջանը[20]:

Շարունակելով նվաճողական քաղաքականությունը Հարավային Կովկասում՝ Սասանյանները դիրքերն այստեղ ամրապնդելու և այդ ժամանակ պատմության ասպարեզ նոր դուրս եկած խազարների հարձակումների դեմ ամուր պատնեշ ստեղծելու համար, պարիսպներ և ռազմական հենակետեր կառուցելուն զուգընթաց, իրականացնում էին նաև վարչական բնույթի միջոցառումներ: Դրանց ընթացքում արյաց արքաները և հատկապես Խոսրով Ա Անուշիրվանը (531-578 թթ.), որ որդեգրել էր հոր՝ Կավատի (488-531 թթ.) քաղաքականության նույն ուղղվածությունը, տարածաշրջանը բնակեցնում էին իրենց համար հուսալի մարդկանցով ու ցեղերով, նրանցից թագավորներ էր ընտրում և «յուրաքանչյուրին շնորհելով շահական իրավունք առանձին մարզերի վրա»[21] և ինքնիշխանություն տալով՝ նրանց վրա էր դնում այդ մարզերի պաշտպանության խնդիրը:Այսպիսի միջոցառումների հետևանքով Աղվանից մարզպանության՝ Կուրից հյուսիս ընկած տարածքը մասնատվում է: Առաջանում են նոր, էթնիկ ապես խայտաբղետ բնակչություն ունեցող և սեփական տիրակալներով կառավարվող վարչաքաղաքական միավորներ, որոնք սկսում են հանդես գալ տեղի իշխանական տների կամ ցեղերի անուններով՝ Գիլան, Լակզ, Լիրան, Շիրվան, Շաքի և այլն:

Նույն ժամանակներում մարզպանության հարավային մասում կամ Ուտիք-Արցախյան աշխարհում առանձնանում և մարզպանության կազմից դուրս իր ինքնուրույն գոյությունն է վերապրում տեղական, հայկական իշխանությունը՝ Առանշահիկների գլխավորությամբ: Այս գործընթացների հետևանքով Աղվանից մարզպանությունը տրոհվում է և դադարում մեկ միասնական վարչաքաղաքական միավոր լինելուց: Որպես դրա բնական հետևանք՝ նրա «Աղվանք» ընդհանուր անվանումն էլ դառնում է ավելորդ և կորցնում ողջ մարզպանության տարածքն արտահայտող իր նախկին, ընդարձակ իմաստը և կենտրոնանում միայն Ուտիքի ու Արցա-

---

[19] Սկսած այդ ժամանակներից էլ հայ պատմիչները, «Աղվանք» ասելով, հիմնականում նկատի են ունեցել Արցախի և Ուտիքի տարածքը:

[20] Մանրամասները տե՛ս Սվազյան Հ. Ս., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 199-221 և կից՝ «Աղվանից մարզպանություն (461 թ. - 6-րդ դարի վերջ)» քարտեզը (նույն տեղում, էջ 293):

[21] **Баладзори,** Книга завоевания стран , пер. Жызе П.К. , Баку ,1927, с 7. «Խոսրովների»(այդպես էին կոչում արաբները պարսից արքաներին) Հարավային Կովկասում վարած նմանատիպ քաղաքականության մասին պատմում են նաև Ալ-Իստահրին և Մասուդին (**Караулов Н.А.,** Сведения арабских географов IX и X веков по Р.Х. О Кавказе, Армении и Азербайджане [տե՛ս Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետև՝ СМОМПК),вып. 29, Тифлис, 1901, с. 15, вып. 38, Тифлис,1908, с. 41].

խի վրա: Վերջիններիս միասնական իշխանությունը, քաղաքական բարձր կազմակերպվածությունը, տնտեսական մակարդակն ու էթնիկական միատարրությունը, որոնք տարածաշրջանը ապահովում էին մասնատման,իսկ բնակչությանը՝ ձուլման վտանգից, եղան այն նախադրյալները, որոնք պայմանավորեցին տեղանվան ամրագրումը նշված տարածքի վրա:

Այսպիսով, «Աղվանք» տեղանունը, որ քաղաքական իրադարձությունների հանգույն փոփոխվում էր ըստ գործածության ոլորտների ու համարժեք բովանդակություն ձեռք բերում, վերը նկարագրված պատմական անցքերի հետևանքով VI դ. վերջերից ամփոփվում է Ուտիք-Արցախյան աշխարհի շրջանակում, ստանում նոր իմաստ ու, այժմ էլ ցույց տալով այդ աշխարհը, դառնում նրան տրվող աշխարհագրական անվանումներին համահավասար հասկացություն:

Ահա այս վերջին իրողությունն էլ համապատասխան բացատրություն-վերտառությամբ պատկերված է Է. Դանիելյանի դիտողությանն արժանացած մեր քարտեզում[22]: Ասենք, որ եթե Է. Դանիելյանը լիներ անաչառ, ապա դա կտեսներ մեր գրքից իր իսկ մեջբերած քաղվածքին նախորդող շարադրանքից, որտեղ տրված են տեղի ունեցածի պատճառները: Խախտելով պատճառահետևանքային կապն ու անտեսելով առաջինը՝ նա ներկայացրել է միայն հետևանքը՝ փորձելով այդ ձևով արժեքավորել իր խոսքը: Նրան ոչինչ չի հուշել նաև քարտեզի վերտառությունը՝ «Աղվանից մարզպանության տրոհումը և «Աղվանք» անվան նոր հասկացության առաջացումը»[23], որը լիակատար պարզությաՍ ցույց է տալիս ինչպես խնդրո առարկա տերմինի իմաստային փոփոխությունը, այնպես էլ նոր իմաստով նրա գործածության ժամանակաշրջանն ու ոլորտը: Առանց խորանալու խնդրի պատմության մանրամասների մեջ և շարունակելով պնդել, թե «Աղվանք» անվան տարածումը Ուտիքի ու Արցախի վրա ոչ թե վարչական, քաղաքական ենթակայության արդյունք է, «քանզի Արցախը և Ուտիքի մեծ մասը եռմևիցե չեն եղել «Աղվանից մարզպանության մեջ», այլ եկեղեցական իրավական վիճակի[24], նա եզրակացնում է. «Դրանով իսկ «Աղվանք» երկրանունը չի կարելի քարտեզագրել Արցախի և Ուտիքի տարածքի վրա»[25]: Իրականությունն այն է, որ Ուտիքն ու Արցախը հայ Առաքելական եկեղեցու «Աղվանից» կոչվող թեմերն էին, և այս հարցում Է. Դանիելյանը ոչ մի նոր խոսք չի ասում: Բայց թե ինչու հենց այդ թեմերը կոչվեցին «Աղվանից», հոդվածագիրն իրեն նեղություն չի տվել պարզելու և բավարարվել է հարևան երկրի եկեղեցու ազդեցության մասին հայտարարություններով: Նրա տրամաբանությամբ հետևում է, որ Ուտիքն ու Արցախը, վարչականորեն պահպանելով իրենց տեղը Հայոց կազմում՝ եկեղեցական-իրավական առումով, սակայն, ազդվել են իրենց համար օտար երկրի եկեղեցուց, իսկ վերջինս էլ, որ ինքն էր կրում Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ազդեցությունը, այնպիսի ներգործություն ունեցավ, որ անվանափոխություն առաջացրեց իր գերակա եկեղեցու թեմերի մոտ, որն էլ հետո վերածվեց տարածքային անվան:

---

[22] Սվազյան Հ. Ս., Աղվանից աշխարհի պատմություն, էջ 294:
[23] Նույն տեղում:
[24] Դանիելյան Է., նշվ. հոդվ., էջ 220, ծանոթ. 78:
[25] Նույն տեղում:

Բայց սա ինքնախաբեություն է: Իրականում այդպիսի պայմանականություններ չեն լինում: Բացի դրանից, ինչպես մենք արդեն առիթ ունեցել ենք ասելու[26], եկեղեցական ազդեցությունները հոգևոր երևույթներ են և ի հայտ են գալիս ստեղծված որոշակի քաղաքական իրադրություններում, ստանում են աշխարհիկ կարգերին հատուկ ձևեր և գործում հօգուտ վերջիններիս: Նրանք ինքնին անվանափոխություններ չէին առաջացնում, այլ, իրենց էությամբ լինելով գաղափարախոսական դրսևորումներ, արագացնում էին նման գործընթացները և նպաստում դրանց ամրագրմանը այս կամ այն վարչական միավորի վրա: Մեր պարագայում ևս Աղվանից եկեղեցին, որը, ինչպես ասացինք, հայոց եկեղեցու համեմատությամբ ինքն էր գտնվում ստորադաս վիճակում, Ուտիքի ու Արցախի նկատմաՍμ չէր կարող կատարել այն դերը, որ նրան է վերագրում Է. Դանիելյանը: Այն ի զորու էր Արցախի ու Ուտիքի վրա միայն հաստատագրել «Աղվանք» անվանումը, որ աշխարհագրորեն կրում էին նրանք Աղվանից մարզպանության կազմավորումից, այսինքն՝ 461 թ. ի վեր՝ դառնալով նրա մարզերը: Նման վարչաքաղաքական կացություն ունենալով էլ՝ Արցախն ու Ուտիքը անվանակոչվեցին «Աղվանք», և դա էլ հենց պատճառ դարձավ, որ հատկապես նրանց և ոչ թե հայկական որևէ այլ նահանգի եկեղեցական թեմերը հորջորջվեցին «Աղվանից»: Ուրեմն աներկբա է, որ խնդրո առարկա նահանգները ժամանակի մի որոշակի հատվածում եղել են Աղվանից մարզպանության կազմում, և, որպես այդ վարչաքաղաքական ենթակայության հետևանք, իրենք ևս կրել են ողջ մարզապանության ընդհանուր անվանումը: Հետևաբար, նրանց համար «Աղվանք» տեղանունը նույնպիսի մի աշխարհագրական անվանում էր, ինչպիսիք «Ուտիք-Արցախ», «Հայոց Արևելից կողմանք», «Խորինն աշխարհ հայոց» անուններն էին: Ուստի սույն անվանաձևի նշումը Ուտիքի ու Արցախի տարածքը ցույց տվող քարտեզի վրա միանգամայն արդարացի է ու ճիշտ: Նման գծագրումը նպաստում է ավելի հստակ պատկերացում կազմելու Խորենացու մատնանշած «Աղվանքի» տարածքի իրական սահմանների մասին և ուղղված է ադոμեջանցի հեղինակների այն սխալ տեսակետի դեմ, թե Խորենացու (և Կաղանկատվացու) տեղեկությունների համաձայն, բուն Աղվանքի սահմանները հասնում էին մինչև Արաքս գետը[27]:

Չհամաձայնվելով մեզ հետ՝ Է. Դանիելյանը նաև նկատում է, թե «հայագետ-պատմաբաններից ոչ մեկի մտքով չի անցել էթնոաշխարհագրական բովանդակություն ստացած «Աղվանք» անունը գրել Արցախի տարածքում»[28]: Նախ, ի գիտություն Է. Դանիելյանի՝ ասենք, որ հիշատակվող տեղանունը եռμեք էլ էթնոաշխարհագրական բովանդակություն չի ունեցել և երբևէ չի էլ ստացել: Լինելով այդպես էլ մեկ էթնիկական ընդհանրության չհասած տարատեսակ ու բազմալեզու ցեղերի բնակության վայրի անվանում, ինքն էլ էթնիկական ծագում չունենալով՝ «Աղ-

[26] Սվազյան Հ., Է.Դանիելյան, Գանձասարի պատմություն (ՊԲՀ, 2007, N 3, էջ 245):
[27] **Мамедов Ф.,** Политическая история и историческая география кавказской Албании,Баку, 1986, с. 116, 120-121.
[28] Դանիելյան Է., նշվ. աշխ., էջ 220 (ընդգծումը՝ Ս. Հ.):

վանքը» իր կիրառման ամբողջ ժամանակաշրջանում մնացել է լոկ որպես աշխարհագրական անվանում: Աղվանից աշխարհի 26 ցեղերի[29] կազմում չկար քաղաքականապես քիչ թե շատ կազմակերպված և տնտեսապես ուժեղ ու առաջատար այնպիսի մի էթնիկական խումբ, որ տեղանվանը հաղորդեր էթնիկական բնույթ: Այնպես որ տերմինի՝ նման հասկացողությաՍ գործածումը «Աղվանք» անվան պարագայում ամենևին տեղին չէ: Իսկ Է. Դանիելյանը գործածում է, որ տպավորություն ստեղծի, թե նման քարտեզագրումով Արցախի և Աղվանքի բնակչությունը դառնում է նույնական իր՝ վտանգավոր հետևանքներով: Բայց սա վերացական միտք է, որ կարող էր ծագել հարցին անիրազեկ կամ կողմնակալ հետազոտողի մեջ, քանի որ Աղվանքն իր խայտաբղետ էթնիկական կազմով այնքան էր տարբերվում Արցախի բուն հայկական ազգաբնակչությունից, որ անգամ անկարելի է երևակայել նրանց՝ այդ երկու անհամատեղելիների նույնացումը: Եվ երկրորդ, որ վերաբերում է հայագետ-պատմաբանների կողմից «Աղվանքը» Արցախի տարածքում չգրանցելու մասին Է. Դանիելյանի դատողությանը: Չենք կարծում, սակայն, որ նրանց այդպիսի վարվելաձևը նշանակում է, թե մեր մոտեցումը սխալ է: Ճիշտ է, հոդվածագիրը դրանով ուզում է ասել, որ նրանք, ի տարբերություն մեզ, տեսել են «վտանգը» և զերծ մնացել դրանից, բայց դա խիստ հարցական է: Հայտնի չէ, թե Աղվանքի պատմության հարցերով զբաղվող հայագետ-պատմաբանները, որոնք գիտեին, որ Արցախի և Ուտիքի տարածքը կրում էր նաև «Հայոց Աղվանք» կամ «Աղվանից Հայք» տեղանունները, առաջ տանեին իրենց քննությունները, արդյո՞ք չէին հանգի Է. Դանիելյանի համար վիճելի մտքին: Ուսումնասիրությունները նոր բացահայտումներ են բերում, և վերջին դեպքը պետք է դասել դրանց շարքին ու չկատարված հետազոտությունների օրինակներով առարկելու փոխարեն ընդունել օրինաչափ զարգացումները:

Քարտեզների հետ կապված ևս մի անդրադարձ: Է. Դանիելյանի աչքից չի վրիպել, որ մեր քարտեզներում, ի տարբերություն «Վիրք» և «Աղվանք» տեղանունների, բացակայում է «Հայաստան» անվանումը՝ դրա տակ, իհարկե, տեսնելով բացասական միտում, քանի որ այն դասել է մեր կողմից «խեղաթյուրվող» հարցերի շարքում: Սակայն, տարված լինելով անպայման անճշտություններ գտնելու սևեռուն մտքով, նա չի «ցանկացել» տեսնել, որ այդ սխեմատիկ քարտեզներում իր փնտրած, բայց տառերով ցույց չտրված «Հայաստան» անվան փոխարեն Հայոց երկիրն արտահայտված է Սևանա լճի գծագիր պատկերով, Արցախի հարևանությաՍ նշված «Սյունիք» տեղանունով և Արտաշատ մայրաքաղաքով՝ քարտեզներում քաղաքներ մատնանշող պայմանական նշանով: Մեզ՝ հայերիս և Հայաստանը քիչ թե շատ ճանաչող օտարների համար նշվածները լիուլի բավարար են Հայաստանի տեղը այդ քարտեզներում իմանալու և որևէ միտում բացառելու համար: Ուստի դա թերություն ներկայացնելու՝ Է. Դանիելյանի ջանքերը, որոնք մեզ ինչ-որ մեղքերի մեջ մեղադրելու նպատակ են հետապնդում, պարզապես ապարդյուն են:

[29] Страбон, География, пер., статья и комм. Г.А. Стратановского, Л., 1964, XI, IV,6.

Մեզ վերագրվող «մեղքերից» մեկն էլ մեր կողմից «Աղվանքի» հիշատակության ժամանակագրական եզրը VIII դարով սահմանափակելն է: Այնինչ, ըստ Է. Դանիելյանի, «Կուրի ձախափնյա Աղվանքը շարունակվում էր հիշատակվել մինչև XIX դ. թե որպես եկեղեցական անվանում և թե աջափնյա հայկական Արցախից առանձին»[30]: Այսպիսի եզրակացությունից երևում է, որ մեր ընդդիմախոսը «Աղվանք» երկրանունը շփոթել է «Աղվանք» եկեղեցական անվան հետ, որը իսկապես գործածվել է տևականորեն և լայն իմաստով՝ Սբ. Էջմիածնին ենթակա բուն Աղվանքի և Հայոց Արևելից կողմանց եկեղեցական թեմերի համար: Նա չի նկատել, որ մեր խոսքը վերաբերում է երկու՝ նույնանուն, բայց տարբեր բովանդակություն ունեցող անվանումներից առաջինին, որ նշված դարից այս կողմ դադարում է ձախափնյա Աղվանքի տարածքը ցույց տալուց և իր տեղը զիջում է հիմնականում «Շիրվան» տեղանվանը: Հետևաբար և հիմք չեն վիճարկվող անվան՝ իբր մինչև XIX դարը հիշատակվելու մասին որպես ապացույց Է. Դանիելյանի բերած հաղորդումները, քանի որ դրանցում «Աղվանք» անվանումը կիրառվում է կամ Հայոց Արևելից կողմանց առումով[31] կամ եկեղեցական[32], էլ չենք ասում՝ նրա վկայակոչած այն աշխատությունների մասին, որոնց նշված էջերում չկա նույնիսկ «Աղվանք» բառը[33]: Որոշ մանրամասնություններ էլ (ինչպես, օրինակ, Կուրի ձախափնյակում հայեր ապրելու և այստեղ նրանց թիվը անընդհատ ավելանալու ու մշակութային արժեքներ ստեղծելու շուրջ արված դիտարկումները[34]) ոչ մի առնչություն չունեն շոշափվող հարցի հետ:

Ահա սրանք էին հայագիտական հիմնահարցերի համար վտանգ ներկայացնող այն «խեղաթյուրումները», որոնք նկատել է Է. Դանիելյանը մեզ մոտ: Բայց թե ինչպիսիք էին դրանք և ինչ «վտանգ» էին ներկայացնում, կարծում ենք, տեսանք մեր ներկա քննությունից: Մնում է միայն խորհուրդ տալ Է. Դանիելյանին՝ նման հարցեր բարձրացնելիս մեկ անգամ ևս ընթերցել V դ. պատմիչ Եղիշեի այն տողերը, որոնք օգտագործել է նա որպես իր հոդվածի բնաբան[35]:

---

[30] Դանիելյան Է., նշվ. հոդվ., էջ 219-220:

31 «Եկին (թաթարները - Ս. Հ.) իջին յաշխարհն Աղուանից ի սահմանս Շամքոր քաղաքի» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեաՍμ Կ. Ա. Մելիքշ ահնազարյանի, Ե., 1961, էջ 202): Շամխորը Արցախի Քուստի Փառնես գավառի, հետագայի Փառիսոսի թագավորության քաղաքներից էր:

[32] Մովսէս Կաղանկատուացի, էջ 341-347, Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. II, Էջմիածին, 1842, էջ 343-344 և այլն:

[33] Հմմտ. Կիրակոս Գանձակեցի, էջ 358, Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 127, 129, Դանիելյան Է., նշվ. հոդվ., ծանոթ. 77, էջ 220:

[34] Դանիելյան Է., նշվ. հոդվ., էջ 219:

[35] Նույն տեղում, էջ 201:

О СМЫСЛОВЫХ ИЗМЕНЕНИЯХ ТОПОНИМА “АЛУАНК” И СФЕРАХ ЕГО УПОТРЕБЛЕНИЯ

СВАЗЯН Г.С.

Резюме

Страна Алуанк зарегистрирована нами на одной из карт, приведенных в монографии “История страны Алуанк”, на территории Утика и Арцаха, что с точки зрения Э. Даниеляна исторически неверно и чревато опасными политическими последстжиями для названных двух армянских областей. Однако топоним “Алуанк” в силу политических обстоятельств претерпел содержательные изменения: с I в. до н.э. до первой половины V в. н.э. этим топонимом называлась территория между р. Курой и южной Кераунской ветвью Главного Кавказского хребта ,то есть территория собственно Алуанка.

С упразднением Алуанского государства в 461 г. И образованием одноименного марзпанства термин “Алуанк” употреблялся для обозначения территории Алуанкского марзпанства вплоть до раздробления последнего . С появлением на севере марзпанства новых политико-административных единиц топоним “Алуанк” закрепился за Утиком и Арцахом как частями бывшего марзпанства, что нашло отражение на вызвавшей возражениия карте и являет собой обьективную картины исторических реалий рассматриваемого периода.